

ՀԱՄԱԳՊԱՅԻՆ

ՄԻՋ-ԴՊՐՈՑԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ

Կազմակերպութեամբ Համագգայինի Թատերական Միաւորի Գրական յանձնախումբին, Կիրակի, 6 Մայիս 2012-ի երեկոյան ժամը 5-ին «Չաւարեան» թատերասրահէն ներս տեղի ունեցաւ միջ-



դպրոցական առաջին թատերական մրցաշարքը: Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերած էին Ժ. Ե. ԺԱ. Կարգի աշակերտներ, Զարէն Եփփէ Ազգ. Ճեմարանէն 3 խումբ, Կրթասիրաց Ս. Չեմպերճեան երկրորդական վարժարանէն մէկ խումբ եւ Լ.Ն.Գ.Կ. վարժարանէն 3 խումբ:

Մրցաշարքին մասնակցող խումբերը իրենք պատրաստած էին իրենց ներկայացումներուն նիւթերը եւ կատարած բեմադրական աշխատանքները՝ փորձառու հսկիչներու ցուցմունքներով: Մրցաշարքի այս պայմանները առիթը տուած էին մասնակից պատանիներուն մօտէն ծանօթանալու թատերական ներկայացման պատրաստութեան բոլոր հանգրուաններուն՝ նիւթի պատրաստութենէ մինչեւ բեմադրութիւն, քուլիսային աշխատանք եւ վերջապէս՝ դերասանութիւն: Հսկիչին դերը միայն յարմար նկատողութիւններ կատարելն է: Այս մօտեցումը կը տարբերի դասական մօտեցումէն, ուր աշակերտներուն կը տրամադրուի պատրաստ նիւթ եւ փորձառու բեմադրիչ ու իրենցմէ կը պահանջուի միայն դերասանել: Մրցաշարքը առաւել քաջալերող միջոց մըն է տեսակաւոր տաղանդներ ի յայտ բերելու եւ թափ տալու աշակերտներուն բեղուն երեւակայութեան:

Հակառակ պատանիներու անփորձ ըլլալուն, անոնք յաջողեցան զանազան տեսակի ներկայացումներ բեմ բարձրացնել՝ զգալի որակով եւ իւրայատուկ ճոխութեամբ: Ներկայացուած նիւթերը ընդհանրապէս կ'ընդգրկէին նոր սերունդը մտահոգող ընկերային հարցեր՝ նիւթապաշտութիւն, ծնողական անհոգ մօտեցում, չարի ու բարիի բախում, անձի ու հայրենիքի սեր եւ ընկերութեան մէջ տիրող սևոտի հաւատալիքներ...:

Հոս պէտք է նշել, թէ ձեռնարկը յայտարարուած էր նաեւ միջնակարգի աշակերտութեան, բայց վերջին շաբթուան, միջնակարգի խումբերը քաշուած էին եւ մնացած միայն Զարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի Ե. Ե. Ը. Կարգի ուսանողները: Այս խումբերը ներկայացան մրցոյթին, որպէս պատուոյ հիւրեր եւ արժանացան յատուկ գնահատագրի:

Ներկայացումներու ասարտին դատակազմը կատարեց իր արժեւորումը: Դատակազմի անդամները արհեստավարժ թատերական գործիչներ էին, տիարք Գրիգոր Զէլէշեան, Ռանետ Պանտաք, Մոսիկ Սարգիսեան եւ Յակոբ Միքայէլեան: Դատակազմի արժեւորումը ներկայացուց ընդհանուր Նիշի կէտը, իսկ երկրորդ կէտը տուաւ հանդիսատեսը՝ քուէարկութեան միջոցաւ: Քուէախոյզ յանձնախումբ մը, որ բաղկացած էր մասնակից դպրոցներու ուսուցչական կազմերէն, կատարեց քուէահամարը եւ թիւին տոկոսաւորումը հանելով գումարուեցաւ դատակազմի կիշերուն հետ:

Նիշերու գումարման ասարտին առաջին հանդիսացաւ Զարէն Եփփէ Ազգ. Ճեմարանէն Ժ. Կարգի «2012» զաւեշտը: Երկրորդ հանդիսացաւ Լ.Ն.Գ.Կ. վարժարանէն Ժ. Կարգի «Ո՞վ կ'ուզէ դառնալ միլիոնատեր» կտորը, որ նաեւ արժանացաւ դատակազմի «Լաւագոյն մտադրացում» մրցանակին: Երրորդ հանդիսացաւ Զարէն Եփփէ Ազգ. Ճեմարանէն «Սրբուկն ու Սատանիկը» զաւեշտը, որ նաեւ արժանացաւ դատակազմի «Լաւագոյն Չգետաւորում» մրցանակին: Կրթասիրաց Ս. Չեմպերճեան

եան երկրորդական վարժարանի Ժ. Կարգի «Դաւաճան Սերը» մելոտրաման արժանացաւ դատակազմի «Լաւագոյն բեմայարդարում» մրցանակին: Հոս պէտք է նշել, թէ իւրաքանչիւր խումբ յատուկ խնամք տարած էր ներկայացման մանրամասնութիւններուն՝ զգեստաւորումէն մինչեւ դիմաւարդարում եւ բեմայարդարում: Իւրաքանչիւր ներկայացում, շնորհիւ պատանիներու բժախնդրութեան, գունաւորուած էր իւրայատուկ գոյներով եւ օժտուած բացառիկ ճոխութեամբ:

Այս առումով, պէտք է նշել, նաեւ, կազմակերպող կողմին՝ Համագգայինի Թատերական Միաւորի Գրական Յանձնախումբի տարած անխնջ, ամիսներու վրայ երկարող աշխատանքը, ինչ որ կրնայ թուիլ պարզ կազմակերպական գործունէութիւն մը, սակայն իրականութեան մէջ յանձնախումբէն պահանջեց ամիսներու հետեւողականութիւն, հերթական ձեւով դպրոցներու այցելութիւն (ներառեալ մրցոյթէն քաշուած դպրոցները), կայուն կապերու հաստատում տնօրէնութիւններուն հետ եւ վերջապէս ներկայացման օրուան համար ապահովում խումբերու պահանջներուն բեմայարդարման եւ այլեւայլ մանրամասնութիւններու առումով: Ելոյթի քուլիսային աշխատանքներուն իր աջակցութիւնը բերած էր նաեւ «Ռագմիկ» մանկապատանեկան յանձնախումբը: Այս աշխատանքը արժանի է բարձր գնահատանքի, որովհետեւ յանձնախումբի այս գոհողութեամբ Համագգայինը կրնայ հասնիլ իր հիմնական նպատակներէն մէկուն, որ հայ պատանին հայ արուեստին ու մշակոյթին առնչելն ու մշակութային իր առաքելութեան ապագայի շարունակականութիւնը ապահովելն է:

Նաեւ պէտք է յիշել մասնակից դպրոցներու՝ Զարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի, Կրթասիրաց Ս. Չեմ-



պերճեան երկրորդական վարժարանի եւ Լ.Ն.Գ.Կ. վարժարանի տնօրէնութիւններուն եւ ուսուցչական կազմերուն դրական մօտեցումն ու քաջալերական օժանդակութիւնը: Իւրաքանչիւրը ճիշդ չիսնայեց համագործակցելու եւ ապահովելու իր աշակերտութեան լաւագոյն ներկայացումը բեմին վրայ: Այսպէս հայկական դպրոցը կը կատարէ իր իսկական առաքելութիւնը, որ սովորական տեղեկութիւն ամբարելու վայրէ անդին, օրուան է հայ մշակոյթի արուեստի ու դպրութեան:

Ձեռնարկի ասարտին ներկայ եղող հոծ բազմութիւնը ցրուեցաւ բարձր տրամադրութեամբ, յուսալով, որ այս ձեռնարկը կը դառնայ տարեկան անհրաժեշտ եւ անոր միջոցաւ անելի մեծ թիւով պատանիներ կ'առնչուին թատրոնին եւ կը դառնան անոր ջահակիրները: «Թատերական մրցաշարք»ը իր ճիշդ արդիւնքին կը հասցնէ զայն գնահատողը, հանդիսատես թէ դատակազմ: Անոնց ճշգրիտ գնահատականները եւ համապատասխան վարձատրութիւնները առողջ ձեւով կը քաջալերեն մասնակից պատանիները եւ կ'ապահովեն ձեռնարկին երկար ժամկետի վրայ ակնկալուած արդիւնքները:

Աւարտին՝ կը մնայ շնորհաւորել բոլոր մասնակից խումբերը, որոնք յաղթականներ են իրենց իւրայատուկ ձեւով եւ բոլորն ալ հանդիսատեսէն ստացան իրենց արդար բաժինը՝ ծափողջոյններով: Պէտք է շնորհաւորել ծնողները այսպիսի շնորհալի զաւակներ ունենալուն համար... պէտք է շնորհաւորել հայ դպրոցը, Համագգայինի հայ մշակոյթի օրրանը... եւ վերջապէս պէտք է շնորհաւորել հայ թատրոնը իր ա՛յսօր ի յայտ բերած աստղերուն համար...:

Յուշիկ Ղազարեան

ԳԻՏԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՕԳՆԵԼ ԵՐԵՒԱՆՅԻՆ ԵԹԷ ԴԱՍԱՐԱՆԸ ԿՐԿՆԱԾ Է

Դասարան կրկնելը շատ ծանր կացութիւն մըն է թէ՛ աշակերտին եւ թէ՛ ծնողին ու ուսուցիչներուն համար:

Ծնողները յաճախ նուաստացած կը զգան եւ իրենց զակին ձախողութիւնը իրենց անձնական ձախողութիւնը կը համարեն:

Պէտք է հակազդել եւ խրատել հանդարտօրէն ու դրական ձեւով պէտք է մօտենալ:

Դասարանը կրկնող երեխան արդէն իսկ նուաստացած եւ արժեզրկուած կը զգայ, հետեւաբար ծնողը, որքան ալ յուսախաբ ըլլայ, պէտք է զգուշանայ փոքրիկին հանդէպ ինչ պահել է եւ անպատասխանատու ու վիրաւորական խօսքեր ըստելէ. օրինակ՝

«Զեզ ուսում է պիտի գրկեմ», «Դու ն ծոյլ մըն ես», «Դպրոցդ պիտի փոխեմ» եւ այլն...:

Այս խօսքերը ո՛չ մէկ շինիչ ազդեցութիւն ու-



նին, այլ՝ պարզապէս սիրտ պաղեցնելու կը ծառայեն եւ երեխային ինքնավստահութիւնը վերջնականապէս կը մեռցնեն: Նոյնպէս ալ պատիժները անիմաստ կը դառնան: Անշուշտ դասարան կրկնող փոքրիկը կարելի է գրկել խոստացուած ճամբորդութենէ մը, բայց կարելի չէ դիմել ֆիզիքական պատիժներու: Շատ անելի լաւ պիտի ըլլար, եթէ առաջը անուած ըլլար դպրոցին կողմէ՝ կազմակերպելով դասընթացներ, տկար աշակերտները զօրացնելու, հետեւաբար կրկնող աշակերտը յաջողէր, ամրապնդուած ու հաստատ քայլերով յաջողութիւն արձանագրեր:

Ո՞վ է մեղաւորը այս պարագային:

Երեխան միակ պատասխանատուն չի նկատուիր իր ձախողութեան: Կրնայ ըլլալ, որ անոր աշխատանքի ձեւը սխալ է, սակայն ծնողը կամ ուսուցիչները պէտք է ուղղէին զինք: Վերջապէս առողջական հարցեր, կամ այլազան հիւանդութիւններ ու խաղի բազմազան տեսակներ կրնան լուրջ անդրադարձ ունենալ փոքրիկին աշխատանքին եւ դըպրոցական արդիւնքներուն վրայ:

Փոխադարձ գիտակցութիւն կը պահանջուի՝ ծնողը-ուսուցիչ-զաւակ:

Ուսումնական յառաջիկայ տարեշրջանը փրկելու եւ զայն խոչընդոտներէ հեռու պահելու լաւագոյն պայմանը՝ ծնողը-ուսուցիչ-զաւակ փոխադարձ հասկացողութիւնն ու գիտակցութիւնն է:

Ծնողական ժողովները պէտք չէ անտեսել, նոյնիսկ երբեմն պէտք է դպրոց այցելել՝ ուսուցիչներուն հետ խորհրդակցելու եւ գիտնալու իրենց զակին ուսման մակարդակը: Աշակերտը յաճախ մատ պէտք է բարձրացնէ դասարանին մէջ, ճիշդ պատասխաններ տայ, որպէսզի դասարանին լաւագոյններէն դառնայ:

Գիտակից ծնողը մը իր զակին նկատմամբ պէտք է ներողամիտ գտնուի եւ անոր գիտակցութիւն ու վստահութիւն ներշնչէ: Վստահաբար դասարան կրկնող աշակերտը վարկաբեկիչ խօսքերով ընկճելը, վիրաւորելը ապարդիւն են: Մինչդեռ գիտակցութեամբ եւ ինքնավստահութեամբ ներշնչելը յառաջիկայ տարեշրջանին անոր դպրոցական յաջողութեան վրայ դրական ազդեցութիւն պիտի ունենայ:

Արիկ Յ. Պասմաճեան